

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ կառավարության 01.04.2021թ թիվ 464-L որոշմամբ հաստատված «Աղբահանության համակարգի ռազմավարություն և ռազմավարության կիրարկումն ապահովող 2021-2023թթ միջոցառումների ծրագրի» կատարման մասին (25.03.2026թ. դրությամբ)

N	Միջոցառումը	Ակնկալվող անմիջական արդյունք	Ժամկետը	Կատարման ընթացքը
1	1.1 ՀՀ տարածքում աղբահավաքության միջոցառումների իրականացում:	ՀՀ բոլոր տարածքներում՝ չսահմանված ու վայրերում, աղբավայրերից դուրս կուտակված աղբի հավաքման ու տարածքների մաքրման աշխատանքների իրականացմամբ՝ ՀՀ տարածքում սանիտարական մաքրության բարձր մակարդակի ապահովում	2021 թվականից Շարունակական	<p align="center">Կատարված է</p> <p>2021-2023 թվականներին իրականացվել են ինչպես համապետական, այնպես էլ շարք տեղային մասշտաբի աղբահավաքության միջոցառումներ՝ հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների, մարզային ու համայնքային ենթակայության հիմնարկների, մասնավոր ընկերությունների աշխատակիցների, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների, դպրոցականների, ուսանողների և բազմաթիվ կամավորների մասնակցությամբ: Աղբից մաքրվել են փողոցներ ու բակեր, միջպետական, հանրապետական, մարզային ու համայնքային նշանակության ճանապարհներ ու ճանապարհամերձ տարածքներ, անտառամերձ տարածքներ, այգիներ, պուրակներ, պատմամշակույթային հուշարձանների տարածքներ: Լվացվել են բազմաթիվ հուշարձաններ: Միաժամանակ վերացվել են աղբակույտեր ու աղբանոցներ:</p>
2	1.2 Աղբահանության տեղական պլանների կազմման մեթոդաբանության մշակում	Յուրքաքանչյուր համայնքի համար աղբահանության պլանների կազմման համար մեթոդական աջակցություն և պլանների կազմման հնարավորություն	2021թ հուլիս	<p align="center">Կատարված է</p> <p>«Աղբահանության և կոշտ թափոնների տեղական կառավարման պլանի կազմման մեթոդաբանությունը հաստատվել է ՏԿԵ նախարարի 25.01.2024թ. թիվ 07 հրամանով:</p> <p>Հարկ է նշել, որ մեթոդաբանությունը մշակվել, ՀՀ մարզպետարանների և Երևանի քաղաքապետարանի հետ քննարկվել է և սահմանված ժամկետում ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ: Նախագիծը հնարավոր է եղել հաստատել «Աղբահանության մասին ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունումից հետո՝ լիազորող նորմի առկայության մասով:</p>
3	1.3 Աղբահանության սխեմաների	ՀՀ բնակավայրերում գոյացող	2021թ. սեպտեմբեր	<p align="center">Կատարված է</p>

	մշակման մեթոդաբանության և կիրառելի համակարգչային մոդելի (GIS համակարգի կիրառմամբ) մշակում	աղբի քանակի և բնակավայրերի աշխարհագրական դիրքով պայմանավորված՝ հանրապետության ողջ տարածքում աղբահանության		Մշակվել է «Աղբահանության սխեմաների մշակման մեթոդաբանությանը և կիրառելի համակարգչային մոդելը (GIS համակարգի կիրառմամբ), որը քննարկվել է ՀՀ մարզպետարանների, Երևանի քաղաքապետարանի, ՀՀ ԲՏԱ նախարարության և ԷԿԵՆԳ-ի հետ: Սահմանված ժամկետում ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ:
4	1.4 Աղբահանության և թափոնների կառավարման ոլորտում գերատեսչությունների համագործակցության, ներառյալ վերահսկողության իրականացման բարելավմանն ուղղված	Աղբահանության և թափոնների կառավարման ոլորտի բարելավմանն ուղղված համատեղ գործողությունների իրականացում, գործառույթների կրկնության բացառում	2021թ. նոյեմբեր	Կատարված է Աղբահանության և կոշտ թափոնների կառավարման ոլորտում ՀՀ շրջակա միջավայրի և ՀՀ էկոնոմիկայի նախարարությունների, «Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամի, մարզպետարանների, համայնքների, այդ թվում՝ Երևանի քաղաքապետարանի հետ բազմիցս կազմակերպվել են քննարկումներ ոլորտի խնդիրների շուրջ, համատեղ մշակվել են իրավական ակտերի նախագծեր, ծրագրային առաջարկներ: Աղբի վերամշակման մասով ներդրումային առաջարկները մշտապես համատեղ քննարկվում են ՀՀ շրջակա միջավայրի և էկոնոմիկայի նախարարությունների հետ:
5	1.5 Աղբի հավաքման և փոխադրման համար ներգրավվող կազմակերպությունների համար գործունեության պայմանների սահմանում	Աղբահանության համակարգում մասնագիտացված կարողություններով և տեխնիկական համապատասխան հագեցվածությամբ կազմակերպությունների ներգրավում	2022թ. փետրվար	Կատարված է «Աղբի հավաքման և փոխադրման համար ներգրավվող կազմակերպությունների համար գործունեության պայմանները» հաստատվել են ՀՀ ՏԿԵ նախարարի 21.03.2024թ N 518-Ա հրամանով: Հարկ է նշել, որ պայմանները մշակվել և սահմանված ժամկետում ներկայացվել են ՀՀ վարչապետի աշխատակազմ: Նախագիծը հնարավոր է եղել հաստատել «Աղբահանության մասին ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունումից հետո՝ լիազորող նորմի առկայության մասով:
6	1.6 Շինարարական աղբի հավաքման, տեղափոխման և հեռացման և (կամ) օգտահանման ընթացակարգերի մշակում	Շինարարական աղբի առանձին հավաքում, տեղափոխում և առանձին հեռացում (կամ) օգտահանում	2022թ. ապրիլ	Կատարված է «Շինարարական աղբի հավաքման, տեղափոխման, պահման և հեռացման ընթացակարգը» հաստատվել է ՀՀ ՏԿԵ նախարարի 22.03.2024թ. N 24-Լ հրամանով: Հարկ է նշել, որ ընթացակարգը մշակվել և սահմանված ժամկետում ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ: Նախագիծը հնարավոր է եղել հաստատել «Աղբահանության

				մասին ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունումից հետո՝ լիազորող նորմի առկայության մասով:
7	1.7 Աղբի ժամանակավոր պահման համար փոխաբեռնման կայանների շահագործման նորմերի սահմանում	Հանրապետությունում առկա նոսր բնակեցված, աշխարհագրական և ռելիեֆային տեղադիրքերով և ծախսարդյունավետությամբ պայմանավորված՝ աղբի ժամանակավոր կուտակման ենթակառուցվածքների ստեղծում	2022թ. ապրիլ	Կատարված է «Փոխաբեռնման կայանների շահագործման նորմերը» հաստատվել են ՏԿԵ նախարարի 11.03.2024թ թիվ 02-Ն հրամանով: Հարկ է նշել, որ նորմերը մշակվել և սահմանված ժամկետում ներկայացվել են ՀՀ վարչապետի աշխատակազմ: Նախագիծը հնարավոր է եղել հաստատել «Աղբահանության մասին ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունումից հետո՝ լիազորող նորմի առկայության մասով:
8	1.8 Աղբահանության ծառայությունների մատուցման պայմանագրային դաշտի բարելավում	Աղբահանության բարելավված ծառայություններ, պատասխանատվության և հսկողական գործիքների կիրառու	2022թ. հունիս	Կատարված է Մշակվել է «Աղբահանության ծառայությունների մատուցման տիպային պայմանագրի» նախագիծը, քննարկվել է շահագրգիռ գերատեսչությունների հետ և սահմանված ժամկետում ներկայացվել ՀՀ վարչապետի աշխատակազմ: Սակայն հարկ է նշել, որ ՀՀ Ազգային ժողովի 13.04.2023թ. թիվ ՀՕ-137-Ն օրենքով հավանության արժանացած «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքում պայմանագրային հարաբերությունների պարտադիր պահանջի վերաբերյալ դրույթը հանվել է:
9	1.9 Խոշոր եզրաչափի աղբի (2 քմ և ավելի մակերեսով կենցաղային ու ոչ կենցաղային սարքավորումների, այդ թվում՝ տրանսպորտային միջոցի հենասարք, թափք, մետաղական ջարդոն, էլեկտրատեխնիկական սարքավորումներ ,	Խոշոր եզրաչափերի աղբի առանձին հավաքում, տեղափոխում և հեռացում կամ օգտահանում (ուտիլիզացում)	2022թ. հոկտեմբեր	Կատարված է «Խոշոր եզրաչափի աղբի հավաքման, տեղափոխման, պահման և հեռացման ընթացակարգը» հաստատվել է ՀՀ ՏԿԵ նախարարի 29.02.2024թ. N 363-Ա հրամանով: Հարկ է նշել, որ ընթացակարգը մշակվել և սահմանված ժամկետում ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ: Նախագիծը հնարավոր է եղել հաստատել «Աղբահանության մասին ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունումից հետո՝ լիազորող նորմի առկայության մասով:

	էլեկտրոնային թափոններ, կամ այլ նմանատիպ իրեր), հավաքման, տեղափոխման և օգտահանման և/կամ հեռացման համար ընթացակարգերի մշակում			
10	1.10 Աղբահանության վարձավճարների հաշվարկման մեթոդաբանության մշակում	Աղբահանության սակագների մեջ աղբի գործածության հետ բոլոր գործառույթների ներառում, հավաքագրման համակարգի բարելավում	2023 թ. ապրիլ	Կատարված է Մշակվել է աղբահանության վարձավճարների հաշվարկման մեթոդաբանությունը և սահմանված ժամկետում ներկայացվել է վարչապետի աշխատակազմ
11	1.11 Բարձրահարկ բազմաբնակարան շենքերում աղբամուղերի արդիականացման կամ դրանց փակման ուղղությամբ առաջարկությունների մշակում և ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ	Բարձրահարկ բազմաբնակարան շենքերում քաղաքաշինական, սանիտարական նորմերին համապատասխան աղբի հավաքում և հեռացում	2023 թ. սեպտեմբեր	Կատարված է Մշակվել են բարձրահարկ բազմաբնակարան շենքերում աղբամուղերի արդիականացման կամ դրանց փակման ուղղությամբ առաջարկությունները և սահմանված ժամկետում առաջարկությունները ներկայացվել են ՀՀ վարչապետի աշխատակազմ:
12	1.12 ՀՀ համայնքներում աղբահանության «խելացի» սխեմաների կիրառում	Յուրաքանչյուր համայնքի բնակչության թվով, տեղաբաշխվածությամբ և այլ աղբ առաջացնող սուբյեկտներով (հանրային օբյեկտներ, մասնավոր ոլորտ, սպասարկման և ծառայությունների մատուցման կետեր և այլն), ինչպես նաև	2023թ. նոյեմբեր	Կատարված է ՀՀ Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի բոլոր բնակավայրերի համար մշակված աղբահանության «խելացի» սխեմաները, այդ թվում՝ ելնելով հաշվարկված գոյացող աղբի քանակից՝ յուրաքանչյուր բնակավայրում աղբամանների քանակի ու տեղադիրքերի, աղբատար մեքենաների քանակի ու տեսակի և արդյունավետ երթուղիների ներառմամբ, նախատեսվում էր կիրառել 2023 թվականին, սակայն հաշվի առնելով, որ անհրաժեշտ մեքենասարքավորումների ձեռքբերման մրցությային գործընթացների արդյունքներով վերջիններիս

		<p>պատմամշակութային, զբոսաշրջային կենտրոնների առկայությամբ և աղբի առաջացման սեզոնային տատանումներով պայմանավորված՝ յուրաքանչյուր համայնքում ամրագրված աղբամանների կամ կոնտեյներների տեղադրման վայրեր, դրանց տեսակներ և քանակ, աղբի հավաքման, փոխադրման և հեռացման երթուղիներ և ժամանակացույց</p>		<p>մատակարարումն իրականացվել է 2025 թվականին, ուստի աղբահանության սխեմաները կիրառվել են 2025 թվականի հուլիս ամսվանից: Միաժամանակ խելացի սխեմաները նախատեսվում է կիրառել նաև 8 մարզերի աղբահանության ինտեգրված համակարգի ներդրմանն ուղղված ծրագրի շրջանակներում, որը ներառված է ռազմավարության նոր միջոցառումների ծրագրում:</p>
13	1.13 Աղբահանության համակարգի մշտադիտարկման համակարգի ներդրում	<p>Հանրապետության տարածքում աղբահանության և կոշտ կենցաղային թափոնների ընդհանուր տեղեկատվական բազայի ստեղծում, որն իր մեջ կներառի աղբահանության բոլոր գործընթացների վերաբերյալ ընդգրկուն տեղեկատվություն.</p> <ul style="list-style-type: none"> - գոյացում, - հավաքում - վերամշակում - հեռացում <p>- վարձավճարներ և դրանց հավաքագրում)</p> <ul style="list-style-type: none"> - քարտեզագրված ծառայություններ, - գույքագրված և քարտեզագրված աղբավայրեր 	2023թ. դեկտեմբեր	<p style="text-align: center;">Կատարված է</p> <p>ՀՀ համայնքներում աղբահանության համակարգի մշտադիտարկման համար հիմք հանդիսացող և համայնքների ավագանիների կողմից հաստատված աղբահանության տեղական պլանների միջոցով իրականացվում են մշտադիտարկման աշխատանքներ: Հարկ է նշել, որ «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքի 4.4 -րդ հոդվածով ամրագրված աղբահանության և սանիտարական մաքրման կառավարման տեղական պլանի մշակման ու հաստատման պարտադիր պահանջը, ինչպես նաև 13-րդ հոդվածով սահմանված աղբահանության և սանիտարական մաքրման սխեմայի հաստատման պահանջը ուժի մեջ են մտել 2023 թվականի մայիսի 8-ից, ապա մշտադիտարկման համակարգը հնարավոր է եղել իրականացնել 2024 թվականից</p>

14	<p>1.14 ՀՀ տարածքում աղբահանության համակարգի ուսումնասիրության և վերլուծությունների արդյունքներով՝ աղբահանության և կոշտ թափոնների կառավարման գործընթացների գոտիավորում</p>	<p>ՀՀ տարածքում ըստ աշխարհագրական, համապատասխան ենթակառուցվածքների առկայության, գոյացող թափոնների քանակի ու բաղադրության, աղբավայրերի և վերամշակման գործարանների տեղադիրքերի և սոցիալ-տնտեսական վերլուծությունների արդյունքներով ՀՀ աղբահանության համակարգի գոտիավորում և տարածաշրջանային օպերատորների ներգրավում:</p>	<p>2023 թ. դեկտեմբեր</p>	<p>Կատարված է</p> <p>Նախարարությունը 2021 թվականից նախաձեռնել է հանրապետության տարածքը գոտիավորելու նպատակով ուսումնասիրության իրականացնելու գործողություններ և բանակցություններ է վարել գործընկեր միջազգային կառույցների հետ: Արդյունքում Նախարարության կողմից մշակվել է նախնական ուսումնասիրության տեխնիկական առաջադրանք, որի հիման վրա ՎՋԵԲ-ի կողմից հայտարարվել է մրցույթ, ընտրվել է խորհրդատվական կազմակերպություն, որն իր աշխատանքները մեկնարկել է 2023 թվականի հուլիսից: Ծրագրի շրջանակներում հանրապետությունում կոշտ թափոնների կառավարման և աղբահանության տարածքը գոտիավորելու նպատակով ՎՋԵԲ-ի կողմից ընտրված խորհրդատվական կազմակերպության կողմից համապատասխան առաջարկությունները ներկայացվել են 2024 թվականի սեպտեմբեր ամսին /տարածքը 3 գոտիների բաժանելու մասով՝ Հյուսիսային, Կենտրոնական և Հարավային գոտիներ/: Նշված նախնական ուսումնասիրությունը քննարկվել է Բանկի ներկայացուցիչների և միջազգային փորձագետների հետ նախարարությունում 26.09.2024թ: Արդյունքում , հիմք ընդունելով վերոգրյալը՝ մշակվել և ՀՀ կառավարության 13.02.2025թ. թիվ 143-Լ որոշմամբ հաստատվել է «Աղբահանության ռազմավարության կիրարկումն ապահովող 2025-2032թթ. միջոցառումների ծրագիրը», որով ամրագրվել են հանրապետության տարածքի գոտիավորված աշխարհագրական տարածքները ր նշված տարածքներում մանրամասն նկարագրվել են հյուսիսային, կենտրոնական և հարավային գոտիներում նախատեսվող միջոցառումները:</p>
15	<p>1.15 Աղբահանության և կոշտ թափոնների կառավարման ոլորտում ՊՄԳ և համայնք-մասնավոր գործընկերության գործընկերության կիրառմամբ</p>	<p>Աղբահանության և կոշտ թափոնների կառավարման գործընթացների գոտիավորման միջոցառման արդյունքներով՝ հանրապետության տարածքում</p>	<p>1.14-րդ միջոցառումն իրականացնելուց հետո</p>	<p>Կատարված է</p> <p>Միջոցառման պատասխանատու ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից ներկայացվել է, որ ՀՀ կառավարության 2022 թվականի հուլիսի 28-ի N 1183-Ն որոշմամբ արդեն իսկ սահմանված է ՊՄԳ ընթացակարգը, ՊՄԳ ծրագրերի շրջանակում մատուցվող հանրային ծառայությունների ոլորտները (ներառյալ կոշտ թափոնների</p>

	<p>մասնավոր ներդրողների ներգրավման նպատակով միջոցառումների իրականացում</p>	<p>աղբի հեռացման և վերամշակման ինտեգրված հնարավոր համակարգի ներդրման համար մասնավոր ներդրողների ներգրավման նպատակով ՀՀ-ի համար ցածր ռիսկերով չափանիշների սահմանում, և ըստ այդմ մրցութային փաթեթների մշակում և իրագործում:</p>		<p>հավաքում, մշակում և հեռացում ոլորտը), ինչպես նաև մասնավոր գործընկերոջ ընտրության ընթացակարգը: Դրա հետ մեկտեղ իրականացվել են մի շարք միջոցառումներ մասնավոր ներդրողների ներգրավման ուղղությամբ: Մասնավորապես՝ գործընկերների հետ հիմնվել է թափոնների վերամշակողների ասոցիացիա, որի անդամների հետ պարբերաբար քննարկումներ և աշխատանքներ են տարվում: Միաժամանակ մեկնարկել է Հայաստանում ամերիկյան առևտրային պալատի և հանրապետությունում խոշոր ընկերությունների հետ պիլոտային ծրագիր փաթեթվածքային թափոնների տեսակավորված հավաքման և ենթակառուցվածքների ստեղծման ուղղությամբ: Մասնավորապես՝ ՀՀ Կոտայքի մարզի Հրազդան համայնքում իրականացվում է փորձնական ծրագիր, որի շրջանակներում հիմնվել է «Էկո-Պակ Հայաստան Արտադրողների Պատասխանատվություն» Հիմնադրամը /«Eco Pack Armenia Producers Responsibility» foundation/: Հիմնադիրները՝ -«Կոկա-Կոլա Հելենիկ Բոթինգ Արմենիա» ՓԲԸ, -«Ջերմուկ Ինթերնեշնլ Պեպսի Կոլա Բոթլեր» ՍՊԸ, - «Երևանի կոնյակի Ընկերություն» ՓԲԸ: Ծրագրի շրջանակներում ուսումնասիրվել են տեղական վաճառող ընկերությունները, ձեռք են բերվել անհրաժեշտ թափոնամանները և տեխնիկան: Ծրագրի պաշտոնական մեկնարկը տրվել է 2025թ. հոկտեմբեր ամսին: Ծրագրի շրջանակներում իրականացվում է փաթեթվածքի թափոններ տեսակավորված հավաքում և փոխադրվում վերամշակող ընկերություններ:</p>
	<p>2.1 Գործող աղբանոցների բարեկարգման և շահագործման համար քաղաքաշինական, բնապահպանական և սանիտարական նվազագույն նորմերի սահմանում</p>	<p>Աղբի պատշաճ հեռացման կազմակերպում: Հաշվի առնելով, որ ԵՄ կարգավորումներով աղբավայրերի ստեղծման, շահագործման ու փակման նորմերն ու պահանջները բավականին խիստ են ու ֆինանսական մեծ միջոցներ են պահանջում, առաջարկվում է</p>	<p>2021 թ. դեկտեմբեր</p>	<p>Կատարված է Մշակվել և ՀՀ կառավարության 2024 թվականի հունվարի 4-ի թիվ 27-Ն որոշմամբ հաստատվել են «Հայաստանի Հանրապետության տարածքում գոյություն ունեցող և գործող աղբավայրերի շահագործման, բարեկարգման և փակման նվազագույն նորմերը» : Հարկ է նշել, որ նորմերը մշակվել և սահմանված ժամկետում ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ: Նախագիծը հնարավոր է եղել հաստատել «Աղբահանության մասին ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ</p>

		սահմանել շրջակա միջավայրին և մարդու առողջության վրա նվազագույն բացասական ազդեցությունների մասով նորմերն ու պահանջները:		կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունումից հետո՝ լիազորող նորմի առկայության մասով:
2.2 Աղբավայրերի փակման նվազագույն նորմերի սահմանում	Շրջակա միջավայրի վրա ազդեցությունների նվազեցում՝ դեպի մթնոլորտ արտանետումների և կեղտաջրերի ստորերկա ջրերի ներթափանցման նվազեցում և (կամ) բացառում	2021 թ. դեկտեմբեր	Կատարված է Մշակվել և ՀՀ կառավարության 2024 թվականի հունվարի 4-ի թիվ 27-Ն որոշմամբ հաստատվել են «Հայաստանի Հանրապետության տարածքում գոյություն ունեցող և գործող աղբավայրերի շահագործման, բարեկարգման և փակման նվազագույն նորմերը» : Հարկ է նշել, որ նորմերը մշակվել և սահմանված ժամկետում ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ: Նախագիծը հնարավոր է եղել հաստատել «Աղբահանության մասին ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունումից հետո՝ լիազորող նորմի առկայության մասով:	
2.3 Հանրապետությունում առկա աղբանոցների գույքագրում և քարտեզագրում (տեղադիրք, մակերես, ծավալներ)	Գործող աղբանոցների ռեեստրի ստեղծում	2023 թ. մայիս	Կատարված է Նախարարության կողմից գույքագրվել են հանրապետությունում գործող աղբանոցները, որոնց արդյունքներով աղբանոցների թիվը կազմում է 120 և համապատասխան տեղեկատվությունը սահմանված ժամկետներում ներկայացվել է Վարչապետի աշխատակազմ	
2.4 Նոր աղբավայրերի նախագծման, շինարարության, շահագործման և մշտադիտարկման նորմերի սահմանում	Շրջակա միջավայրի վրա աղբի հեռացման վայրերի բացասական ազդեցությունների բացառում	2023 թ. սեպտեմբեր	Կատարված է «Աղբավայրերի նախագծման, կառուցման և շահագործման կարգը» հաստատվել է ՏԿԵ նախարարի 08.05.2024թ թիվ 07-Ն հրամանով: Հարկ է նշել, որ կարգը մշակվել և սահմանված ժամկետում ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ: Նախագիծը հնարավոր է եղել հաստատել «Աղբահանության մասին ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունումից հետո՝ լիազորող նորմի առկայության մասով:	
2.5 Քաղաքաշինական, բնապահպանական և սանիտարական նորմերին	Շրջակա միջավայրի վրա աղբանոցների բացասական	2023թ. նոյեմբեր	Կատարված է ՀՀ 2021-2024 թվականներին համայնքներում փակվել է շուրջ 100 աղբավայր	

	<p>չհամապատասխանող առնվազն 50 աղբանոցների փակում</p>	<p>ազդեցությունների նվազեցում</p>		
	<p>2.6 Առնվազն երկու նոր սանիտարական աղբավայրերի կառուցում՝ Հրազդանում (այդ թվում՝ երկու փոխաբեռնման կայաններ Ակունք և Մարտունի համայնքներում) և Երևանում</p>	<p>Շրջակա միջավայրի վրա աղբանոցների բացասական ազդեցությունների նվազեցում</p>	<p>2023թ. դեկտեմբեր</p>	<p>Կատարված է մասնակի</p> <p>Ավարտվել են ՀՀ Կոտայքի մարզի Հրազդան համայնքում հանրապետությունում առաջին սանիտարական աղբավայրի և Ակունք ու Մարտունի բնակավայրերում աղբի փոխաբեռնման կայանների շինարարական աշխատանքները: Սանիտարական աղբավայրը շահագործվում է 2025թ. հուլիսի 9-ից:</p> <p>Իսկ Երևանի աղբավայրի կառուցման գործընթացների մասով ՎՋԵԲ-ի կողմից 2025թ դեկտեմբերին հայտարարվել է խորհրդատվական ընկերության ընտրության մրցույթը: Որի շրջանակներում նախատեսվում է գործող աղբավայրերի փակում և նոր սանիտարական աղբավայրի կառուցմանն առնչվող խորհրդատվական ծառայությունների մատուցում:</p>
	<p>3.1 «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի մշակում և ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ</p>	<p>Օրենքով սահմանումների հստակեցում, հինգաստիճան ստորակարգության ամրագրում, սկզբնաղբյուրում տեսակավորման դրույթի ամրագրում, աղբի տեսակների համար առանձին կարգավորումների սահմանում, աղբի նվազեցման ու օգտահանման համար խթանիչ մեխանիզմների սահմանում</p>	<p>2021 թ. դեկտեմբեր</p>	<p>Կատարված է</p> <p>Մշակված «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը հավանության է արժանացել ԱԺ-ի կողմից 13.04.2023թ. թիվ ՀՕ-137-Ն օրենքով: Հարկ է նշել, որ օրենքի նախագիծը սահմանված ժամկետում ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ: Այնուհետև աշխատակազմից այն վերադարձվել է լրամշակման՝ օրենքի նախագծից բխող համապատասխան դրույթների վերաբերյալ «Վարչական իրավախախտումների մասին» ՀՀ օրենսգրքում փոփոխություններ ու լրացումներ կատարելու առաջարկով: Այնուհետև բազմաթիվ քննարկումների արդյունքներով հիմնավոր փոփոխությունների ներառմամբ օրենդրական փաթեթը մշակվել է և արդյունքում լրամշակված տարբերակը հավանության է արժանացել ՀՀ կառավարության կողմից, ինչպես նաև ՀՀ Ազգային Ժողովի կողմից՝ 2023թ ապրիլին, իսկ ուժի մեջ մտել 2023թ մայիսի 8-ից:</p>
	<p>3.2 Աղբի բաղադրության ուսումնասիրության</p>	<p>Հանրապետությունում պարբերաբար աղբի</p>	<p>2021 թ. դեկտեմբեր</p>	<p>Կատարված է</p>

<p>իրականացման համար մեթոդաբանության մշակում</p>	<p>բաղադրության</p>		<p>Մշակվել և շահագրգիռ գերատեսչությունների ու մարզպետարանների հետ քննարկվել և սահմանված ժամկետում ՀՀ վարչապետի աշխատակազմ է ներկայացվել «Աղբի բաղադրության ուսումնասիրության իրականացման մեթոդաբանությունը»: Մեթոդաբանությունը ներկայացվել է ՀՀ մարզպետարաններ և համայնքներ:</p>
<p>3.3 Կենսաքայքայվող թափոնների օգտահանման և մշակման առաջարկությունների և ընթացակարգերի մշակում</p>	<p>Կենսաքայքայվող թափոնների առանձնացված հավաքում, փոխադրում և օգտահանում ու մշակում</p>	<p>2022 թ. հոկտեմբեր</p>	<p>Կատարված է «Կենսաքայքայվող թափոնների հավաքման, տեղափոխման, պահման ու հեռացման ընթացակարգը» հաստատելվել է ՏԿԵ նախարարի 23.05.2024թ թիվ 37-Լ հրամանով: Հարկ է նշել, որ ընթացակարգը մշակվել և սահմանված ժամկետում ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ: Նախագիծը հնարավոր է եղել հաստատել «Աղբահանության մասին ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունումից հետո՝ լիազորող նորմի առկայության մասով:</p>
<p>3.4 Թափոնների հիերարխիայի իրագործմանը նպաստող գործողությունների համար տնտեսական արտոնությունների կիրառման օրենսդրական հիմքերի ստեղծում</p>	<p>Սակավաթափոն արտադրության, թափոնների քանակի նվազեցման, դրանց օգտահանման, կրկնօգտագործման, վերամշակման գործընթացների խրախուսում և հիերարխիայի իրագործմամբ զբաղվող կազմակերպությունների հետաքրքրության բարձրացում</p>	<p>2023 թ. մայիս</p>	<p>Կատարված է Միջոցառման պատասխանատու ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից ներկայացվել է, որ ՀՀ կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագրի ՀՀ էկոնոմիկայի նախարարության բաժնի 8.4 կետի շրջանակներում ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2022 թվականի սեպտեմբերի 9-ի N 1503-Լ հրամանով հաստատվել է Բնական ռեսուրսների տնտեսական ցիկլում առավել երկար պահպանման նախադրյալների ստեղծման ճանապարհային քարտեզը: Եվ քայլեր են ձեռնարկվում Բնական ռեսուրսների տնտեսական ցիկլում առավել երկար պահպանման նախադրյալների ստեղծման (շրջանաձև տնտեսություն) հայեցակարգի նախագծի մշակման ուղղությամբ:</p>
<p>3.5 Թափոնների օգտահանման և վերամշակման գործընթացի և տեխնոլոգիաների, ինչպես նաև օգտահանված և</p>	<p>Թափոնների վերամշակման և օգտահանման տեխնոլոգիաների, ինչպես նաև արտադրվող արտադրանքի</p>	<p>2023 թ. հոկտեմբեր</p>	<p>Կատարված է Մշակվել և հաստատվել են հետևյալ ստանդարտները - ՀՍ ԻՍՕ 18605:2022 «Փաթեթավորում և շրջակա միջավայր. Էներգիայի օգտահանում» - ՀՍ ԻՍՕ 18604:2022 «Փաթեթավորում և շրջակա միջավայր. Նյութի վերամշակում»</p>

	վերամշակված արտադրանքների նորմերի, ստանդարտների և պահանջների սահմանում	համար էկոլոգիապես և մարդու առողջության վրա անվնաս պահանջների, նորմերի և ստանդարտների սահմանում:		- ՀՍ ԻՍՕ 14855-1:2022 «Կոմպոստացման վերահսկելի պայմաններում պլաստիկ նյութերի վերջնական անբոք կենսաքայքայելիության որոշում. Անջատված ածխածնի երկօքսիդի վերլուծության կիրառման մեթոդ - Մաս 1. Ընդհանուր մեթոդ»
	3.6 Արտադրողի ընդլայնված պատասխանատվության կիրառման նպատակով տեխնիկատնտեսական ուսումնասիրությունների իրականացում:	Արտադրողի ընդլայնված պատասխանատվության և «աղտոտողը վճարում է» սկզբունքի ու գործիքի կիրառման համար անհրաժեշտ ուսումնասիրության ապահովում	2023 թ. դեկտեմբեր	<p align="center">Կատարված է</p> <p>ՀՀ շրջակա միջավայրի նախարարությանը աջակցություն ցուցաբերելու նպատակով շվեդական SIDA և Հայաստանի Ամերիկյան համալսարանի Հակոբյան բնապահպանական կենտրոնի հետ իրականացվող «Թափոնների կառավարման ծրագրի» շրջանակներում նախատեսվում է ներդնել «Արտադրողի ընդլայնված պատասխանատվության» համակարգը: Այդ ուղղությամբ իրականացվել են ուսումնասիրություններ, մշակվել են հայեցակարգային դրույթներ և ծրագրի շրջանակներում արդեն իսկ մշակվել է «Արտադրողի ընդլայնված պատասխանատվության մասին» ՀՀ օրենքի նախագիծը: Նախագիծը ներկայումս գտնվում է ԿԱԳ-ի գործընթացում:</p> <p>Դրա հետ մեկտեղ, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը բանակցություններ է վարել գործընկերների, այդ թվում՝ Հայաստանի ամերիկյան առևտրի պալատի ղեկավարության հետ և մեկնարկել է պլիոտային ծրագիր՝ փորձնական կիրառել փաթեթավորումից առաջացող թափոնների մասով ԱԸՊ-ի մեխանիզմները, այդ թվում՝ նշված թափոնների տեսակավորված հավաքման և վերամշակման ենթակառուցվածքների ներդրմամբ</p>
	3.7 Կենցաղային աղբի տեսակավորմանն ու վերամշակմանը և օգտահանմանն ուղղված միջոցառումների իրականացում	աղբը որպես երկրորդային ռեսուրս օգտագործում և աղբավայրում տեղադրվող աղբի քանակի նվազեցում	2023 թ. դեկտեմբեր	<p align="center">Կատարված է</p> <p>Նախարարության կողմից մշակված և ՀՀ Ազգային ժողովի 13.04.2023թ. թիվ ՀՕ-137-Ն օրենքով հավանության արժանացած «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքում ամրագրվել են ոլորտի պետական քաղաքականության հիմնական սկզբունքները, մասնավորապես՝ առաջացող աղբի քանակի նվազեցումը, աղբի տեսակավորման, վերաօգտագործման, վերամշակման և օգտահանման գործողությունների կիրառումը և</p>

				<p>աղբավայրերում տեղադրվող աղբի ծավալների նվազեցումը, շրջանաձև տնտեսության խթանումը:</p> <p>Միաժամանակ նախարարության կողմից մշակված՝ աղբավայրերի շահագործման ու փակման նվազագույն նորմերի սահմանումը, աղբահանության տեղական պլանների կազմման, աղբի բաղադրության ուսումնասիրության մեթոդաբանությունների մշակման, շինարարական, մեծ գաբարիտով աղբի, կենսաքայքայվող աղբի հավաքման ու տեղափոխման ընթացակարգերն ուղղված են ինստիտուցիոնալ և օրենսդրական հենքի ստեղծմանը՝ թափոնների կանխարգելման ու քանակի նվազեցման ծրագրերի մշակման ու իրականացման համար:</p> <p>Դրա հետ մեկտեղ, միջազգային կառույցների հետ նշված ուղղությամբ ծրագրերի իրականացման մասով միջազգային գործընկերների և տեղական ինքնակառավարման մարմինների հետ համատեղ իրականացվում են մի շարք ծրագրեր՝ ուղղված թափոնների տեսակավորված հավաքմանը ու դրանց հետագա վերամշակմանը, մասնավորապես Երևան, Գյումրի, Վանաձոր, Սևան համայնքներում:</p>
4. Բնակչության տարբեր խավերի շրջանում, այդ թվում՝ կրթական հաստատություններում դասընթացների, կլոր սեղանների, գիտական կոնֆերանսների, աշխատաժողովների, հանրային քննարկումների կազմակերպում, այդ թվում՝ համագործակցելով միջազգային կրթական և ոլորտում գործող կառույցների հետ:	<p>Լայն հանրության շրջանում իրազեկվածության բարձրացում, Կրթական հաստատություններում բաց դռների անցկացում:</p> <p>Միջազգային կրթական հաստատություններում և ոլորտի առաջադեմ կառույցներում փորձի փոխանակման և վերապատրաստման անցկացում:</p>	2021 -2023թթ	<p>Կատարված է</p> <p>2021 թվականից սկսված կազմակերպվել են գործընկերների հետ համատեղ բազմաթիվ կլոր սեղաններ, քննարկումներ, աշխատաժողովներ ու համաժողովներ կոշտ թափոնների կառավարման ու աղբահանության ոլորտին առնչվող հարցերի շուրջ, ինչպես նաև կազմակերպվել են իրազեկման ու ուսուցողական միջոցառումներ: Նշված միջոցառումները, ոլորտին առնչվող խնդիրների քննարկմանը զուգահեռ, նպատակ ունեն նաև ներկայացնել հանրապետությունում աղբահանության համակարգի բարելավմանը միտված, արդեն իսկ իրականացվող և նախատեսվող միջոցառումները՝ բարձրացնելով քաղաքացիների իրազեկվածության աստիճանը, մատնանշել աղբի պատշաճ գործածության բնապահպանական և սոցիալ-տնտեսական օգուտները:</p>	
4.2 Իրազեկվածության	Տեղեկատվական նյութերի տարածում՝ բացիկների,	2021 -2023թթ	Կատարված է	

<p>բարձրացման միջոցառումների կազմակերպում</p>	<p>բուկլետների տեսքով, էլեկտրոնային կայքերի, մամլո հաղորդագրությունների, սոցիալական մեդիայի՝ հարթակների միջոցով: Հաղորդակցային քարոզարշավների իրականացում: Միջազգային համագործակցություն և միջազգային առաջատար փորձի փոխանակում:</p>		<p>2021 թվականից սկսված ՀՀ մարզերում, Երևան քաղաքում գործընկեր գերատեսչությունների և քաղաքացիական հասարակության հետ մի շարք միջոցառումների, առցանց հանդիպումների ընթացքում հանրային իրազեկվածության բարձրացման նպատակով ներկայացվել է հանրապետությունում աղբահանության համակարգի բարելավմանը միտված միջոցառումները, մատնանշվել աղբի հետ պատշաճ գործածության բնապահպանական և սոցիալ-տնտեսական օգուտները:</p> <p>Բացի այդ, նույն ժամանակահատվածում Հայաստանի Հանրային հեռուստաընկերության եթերներով, ՀՀ կառավարության և ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ֆեյսբուքյան պաշտոնական էջերով բազմիցս լուսաբանվել է «Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի կոշտ կենցաղային թափոնների կառավարում» ծրագրի շրջանակներում Հրազդանի նոր սանիտարական աղբավայրի կառուցման շինարարական աշխատանքները, որը նմանատիպ առաջին աղբավայրն է լինելու ՀՀ տարածքում: Ընդգծվել է վերջինիս կարևորությունը ոչ միայն երկու մարզերի, այլ նաև ամբողջ հանրապետության տարածքում ինտեգրված կայուն աղբահանության համակարգի ներդրման մեկնարկի համար: Դրա հետ մեկտեղ, ՀՀ համայնքներում միջազգային դոնոր կազմակերպությունների աջակցությամբ իրականացվող աղբի հետ գործածությանն առնչվող ծրագրերը լուսաբանվել են մարզային հեռուստաալիքներով, գործընկեր կազմակերպությունների պաշտոնական էջերով (Շվեդիայի Թագավորության դեսպանություն, Նիդերլանդների Թագավորության դեսպանություն, «ISSD» ՀԿ, Հայաստանի Ամերիկյան Համալսրան):</p>
<p>4.3 Հանրապետության կրթական համակարգում թափոնների կառավարման բոլոր բաղադրիչների ներառմամբ</p>	<p>Կրթական համակարգում ներգրավված անձանց բնապահպանական կրթություն</p>	<p>2022թ. օգոստոս</p>	<p>Կատարված է</p> <p>Միջոցառման պատասխանատու ԿԳՄՍՆ-ի կողմից ներկայացվել է, որ ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 4-ի 136-Ն որոշմամբ սահմանվել է հանրակրթության նոր պետական չափորոշիչը, որը հիմնված է կարողունակությունների վրա:</p>

	<p>Կրթական մոդուլների մշակում</p>			<p>Կրթական երեք աստիճաններից յուրաքանչյուրում էկոլոգիական կոմպոնենտին անդրադարձ կա մի քանի վերջնարդյունքների միջոցով. Առաջին աստիճանում՝</p> <p>«11. Իմանա, որ շրջապատող աշխարհի ճանաչողության եղանակներից մեկը գիտությունն է, ներկայացնի մարդու և բնության վրա գիտության որոշ ձեռքբերումների ազդեցությունը.</p> <p>13. տարբերակի և կիրառի բնական ռեսուրսները խնայելու, մարդու կողմից շրջակա միջավայրը պահպանելու և բարելավելու ձևերը, մասնակցի բնապահպանական միջոցառումների, ճանաչի էկոհամակարգերը և դրանց փոխադարձ կապերը.</p> <p>18. ճանաչի և հոգատար վերաբերմունք ցուցաբերի իր բնակավայրի և համայնքի բնության և պատմամշակութային ժառանգության օբյեկտների հանդեպ.»</p> <p>Երկրորդ աստիճանում՝</p> <p>«10. ներկայացնի գիտության նվաճումների՝ տեխնիկայի և տեխնոլոգիաների կիրառության հավանական ազդեցությունը բնության, մարդու և հասարակության վրա.</p> <p>11. մասնակցի բնապահպանական միջոցառումների պլանավորմանը և իրականացմանը.</p> <p>17. նկարագրի բնության, բնակչության, և տնտեսության միջև եղած փոխադարձ կապերը և դրանց արդյունքում ձևավորված համակարգերը.</p> <p>18. նկարագրի կայուն զարգացման էությունը, հիմնական գաղափարները ու դրանց փոխադարձ կապերը.»</p> <p>Երրորդ աստիճանում՝</p> <p>«6. վերլուծի բնական համակարգերի փոխկապակցվածությունները՝ դիտարկելով բնագիտական գիտելիքը որպես մեկ ամբողջություն.</p> <p>8. գնահատի կայուն զարգացման ապահովման հնարավորությունները տարբեր ռեսուրսների կառավարման և պլանավորված օգտագործման միջոցով.</p> <p>9. նախաձեռնի, պլանավորի և իրականացնի բնապահպանական միջոցառումներ.</p>
--	-----------------------------------	--	--	--

				<p>10. բացատրի տեխնոլոգիական նորամուծությունների գիտական հիմքերը, ներկայացնի տեխնոլոգիական ձեռքբերումները որպես գիտական և հետազոտական մտքի արգասիք, գիտակցի դրանց հետ կապված հնարավոր վտանգները բնության և մարդու համար.»</p> <p>Միաժամանակ «Երիտասարդները հանուն բարենպաստ կլիմայի» ծրագրի շրջանակներում, որն իրականացվում է ՅՈՒՆԻՍԵՖ-ի և երեք ոլորտային նախարարությունների հետ համատեղ, պլանավորվում է զարգացնել՝ կլիմայի փոփոխության կրթության շրջանակներում ուսումնական նախագծեր իրականացնելու վերաբերյալ մասնակիցների դասավանդման մասնագիտական կարողությունները՝ վերապատրաստողների վերապատրաստման միջոցով: Այս վերապատրաստումը հիմնվելու է ՀՀ ԿԳՄՍՆ կողմից երաշխավորված երկու ձեռնարկների հիման վրա՝ «Կլիմայի փոփոխություն. ինչպե՞ս իրականացնել ուսումնական նախագծային աշխատանքներ» և «Կլիմայի փոփոխություն, կրթության կազմակերպում» մեթոդական ուղեցույցը</p>
4.4 Ազգային, մարզային և համայնքային մակարդակով թափոնների կանխարգելման և կրճատման ծրագրերի մշակում և իրականացում	Լայն հանրության շրջանում իրազեկվածության բարձրացում	2021 -2023թթ	<p>Կատարված է</p> <p>Թափոնների կանխարգելմանը և կրճատմանն ուղղված ծրագրերի մասով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից համագործակցության աշխատանքներ են տարվում միջազգային կառույցների հետ, մասնավորապես՝ Շվեդիայի միջազգային զարգացման համագործակցության գործակալության (SIDA) աջակցությամբ և Հայաստանի Ամերիկյան համալսարանի Հակոբյան բնապահպանական կենտրոնի հետ համատեղ մշակվել է և ներկայումս ընթացքի մեջ է «Հայաստանի թափոնների կառավարման քաղաքականության իրագործման բարելավում» ծրագիրը (2022-2026թթ.), որի շրջանակներում նախատեսվում է մշակել սկզբնաղբյուրում աղբի տեսակավորման ազգային մոդել և իրականացնել այն ընտրված պիլոտային՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան համայնքում: Ծրագրի նպատակն է ներդնել աղբի տեսակավորված հավաքման համակարգ, ձեռք բերել համապատասխան գույք ու մեքենամեխանիզացիա, աջակցել վերամշակման ենթակա թափոնների վերամշակմանը, ինչպես նաև մշակել Սևան</p>	

			<p>համայնքի աղբահանության և թափոնների կառավարման պլան, որն ուղենիշային կլինի ՀՀ մյուս համայնքների համար:</p> <p>Բացի վերոգրյալը՝ Սևանի համայնքի Ծաղկունք բնակավայրում 2023 թվականին մեկնարկել է «Առավել արդյունավետ ոլորտային ծառայությունների մատուցում ՏԻՄ-երում. թափոնների կառավարումը Հայաստանի համայնքներում փուլ 2՝ ընդլայնվելով Գագարին համայնք» ծրագիրը, որն իրականացվում է «ISSD» հասարակական կազմակերպության կողմից՝ Նիդերլանդների Թագավորության դեսպանության աջակցությամբ: Ծրագրի արդյունքում տարեվերջին Ծաղկունքի բոլոր տնային տնտեսություններում տեսակավորման աղբամանների տեղադրումն ավարտվել է:</p> <p>Բացի այդ՝ 2023 թվականի մայիսի 12-ից ուժի մեջ մտած «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի ընդունումը և դրանից բխող աղբի հավաքման, փոխադրման, պահման, վերամշակման կամ հեռացման գործընթացները և կոշտ թափոնների կառավարումը կանոնակարգող ենթաօրենսդրական մի շարք մշակված նորմատիվ իրավական ակտեր նպատակ ունեն օրենսդրական հիմք ստեղծել թափոնների կանխարգելման ու քանակի նվազեցման ծրագրերի մշակման ու իրականացման համար:</p> <p>Միաժամանակ շարունակյալ աշխատանքներ են տարվում թափոնների վերամշակմանն ուղղված ծրագրային առաջարկների բազմակողմանի ուսումնասիրության և դրանց իրականացման հնարավորությունների մասով</p>
--	--	--	---